ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ոստան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Ոստան, 2-33-07, 2-52-90, vostangyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 31

ՈՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի դրույթներով ավագանին

ՈՐՈՇԵՑ

Հաստատել ավագանու հետևյալ

ՕՐԱԿԱՐԳԸ՝

1. Ոստան համայնքի տարածքում 2019 թվականին տեղական տուրքերի և վճարների սահմանման մասին:

/Զեկ.՝ Հ. Խաչատրյան/

2. Ոստան համայնքի ղեկավարի աշխատավարձի, համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակի, հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի սահմանման մասին:

/Զեկ.՝ Հ. Խաչատրյան/

3. Համայնքի 2018 թվականի բյուջեում փոփոխություն կատարելու մասին:

/Զեկ.՝ Հ. Խաչատրյան/

4. ,,Արարատի մարզի Ոստանի մանկապարտեզ,, համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների թվաքանակի, հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի սահմանման մասին:

/Զեկ.՝ Հ. Խաչատրյան/

5. ,,Արարատի մարզի Ոստանի մանկապարտեզ,, համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատանքները ձմռան սեզոնի ընթացքում դադարեցնելու և մանկապարտեզի աշխատակիցների վարձատրության մասին:

/Զեկ.՝ Հ. Խաչատրյան/

6. Ոստանի համայնքապետարանի հաշվեկշռում եղած շրջանառու և հիմնական միջոցների հաշվառման արդյունքների հաստատման մասին:

/Զեկ.՝ Հ. Խաչատրյան/

7. ,,Արարատի մարզի Ոստանի մանկապարտեզ,, համայնքային ոչ առևտրային կազմակերպության 2019 թվականի ծնողական գումարի չափը սահմանելու մասին:

/Զեկ.՝ Հ. Խաչատրյան/

8. Ոստան համայնքի 2019 թվականի բյուջեի հաստատման մասին:

/Զեկ.՝ Հ. Խաչատրյան/

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ

ԱԼՈՅԱՆ ՇՈՂԻԿ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՆԱՐԻՆԵ

ԱՐՇԱԿՅԱՆ ԳԵՂԱՄ

ԲԱԴԱԼՅԱՆ ԱՐԵՒ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԾՈՎԻԿ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՌՈՒՍՏԱՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՀԱԿՈԲ**

ԽԱՉԱՏՐՅԱՆ

20 __ թ.

_____ ____

գ._____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ոստան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Ոստան, 2-33-07, 2-52-90, vostangyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 32

ՈՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2019 ԹՎԱԿԱՆԻՆ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 18-րդ կետով, ,,Տեղական տուրքերի և վճարների մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ և 14-րդ հոդվածների պահանջներով ավագանին

ՈՐՈՇԵՑ

Արարատի մարզի Ոստան համայնքի տարածքում 2019 թվականին սահմանել տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելված 1-ի:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ

ԱԼՈՅԱՆ ՇՈՂԻԿ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՆԱՐԻՆԵ

ԱՐՇԱԿՅԱՆ ԳԵՂԱՄ

ԲԱԴԱԼՅԱՆ ԱՐԵՒ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԾՈՎԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՀԱԿՈԲ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

Հավելված 1
Ոստան համայնքի ավագանու
21-ը դեկտեմբերի 2018թ.
թիվ 32-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՈՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2019Թ-Ի ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ոստան համայնքում սահմանվում են տեղական տուրքերի հետևյալ դրույքաչափերը.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

հիմնական շենքերի և շինությունների համար՝

ա. մինչ և 300քմ. ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում այգեգործական /ամառանոցային/ տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ 7500 դրամ.

բ. սույն կետի <<ա>> ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 15.000 դրամ.
- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 25.000 դրամ.
- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 25.000 դրամ.
- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 50.000 դրամ.

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1500 դրամ.
- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 2500 դրամ.

2) Համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝ 1500 դրամ.

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, և բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն

որոշման հավելվածի 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքի գործառնական նշանակության փոփոխության մասով.

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքի գործառնական նշանակության փոփոխություն , ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն որոշման հավելվածի 1-ին կետի՝ 1-ին ենթակետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ 2500 դրամ:

4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 60000 դրամ.

5) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 30000 դրամ.

6)համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և /կամ/ ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26քմ. ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 2700 դրամ.
- 26-ից մինչև 50քմ. ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3600 դրամ.
- 50-ից մինչև 100քմ. ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 5100 դրամ.
- 100-ից մինչև 200քմ. ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 6900 դրամ.
- 200 -ից մինչև 500քմ. ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 12000 դրամ.
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 24000 դրամ:

բ. ծխախոտի արտադրանք վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչ 26քմ. ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառք կազմակերպման դեպքում՝ 2700 դրամ,
- 26-ից մինչև 50քմ.ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3600 դրամ,
- 50-ից մինչև 100քմ. ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 5100 դրամ,
- 100-ից մինչև 200քմ. ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 6900 դրամ,
- 200-ից մինչև 500քմ. ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 12000 դրամ,
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 24000 դրամ:

7) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական

տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ 105 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

8) համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1500 դրամ.

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 3000 դրամ

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4500 դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 6000 դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 9000 դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 15000 դրամ.

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 300դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հազար մեկ դրամից 600 դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1200 դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2400 դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4500 դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 7500 դրամ.

9) ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 600 դրամ.

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1050 դրամ.

գ. սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ.

դ. այլ արտաքին գովազդի համար՝ 450 դրամ.

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով.

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով.

10) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ 3000 դրամ:

Սույն որոշման 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով սահմանված դրույքաչափերը հաշվարկվել են

0.5 գործակցի կիրառմամբ, իսկ 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ և 10-րդ, կետերով սահմանված դրույքաչափերը հաշվարկվել են 0.3 գործակցի կիրառմամբ:

Տեղական վճարներ

1) համայնքի տարածքում ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո, շենքերի և շինությունների/ այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականոցումը, ընդլայնումն ու բարեկարգումը/ կառուցման ավարտը , ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 1.000 դրամ.

2) ,,Արարատի մարզի Ոստանի մանկապարտեզ,, համայնքային ոչ առևտրային կազմակերպությունում յուրաքանչյուր երեխայի համար ամսական՝ 6000 դրամ.

3) Անասնաբույժի ծառայության վճար.

1. Կենդանիների հիվանդությունների բուժման, կանխարգելման հարցերով խորհրդատվություն՝ 500 դրամ,

2. Ծննդօգնություն՝

ա . թեթև միջամտություն՝ 1000 դրամ,

բ . ծանր միջամտություն՝ 5000 դրամ,

3. Արյունառում կամ այլ նմուշառում՝ մանր կենդանի՝ 100 դրամ,

խոշոր կենդանի՝ 200 դրամ,

Բացառությամբ ,,Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում,, պետական ծրագրում ընդգրկված հակաանասնահամաճարակային միջոցառումների,

4. Կենդանիների արտաքին և ներքին մակաբույծների դեմ պայքար՝ 200 դրամ

5. Ախտահանություն-1 քմ՝ 100 դրամ,

6. Միջատազերծում /դեզինսեկցիա/ - 1 քմ՝ 200 դրամ,

7. Կրծողների ոչնչացում /դեռատիզացիա/ - 1 քմ՝ 200 դրամ,

8. Արհեստական սերմնավորում՝ 5000 դրամ,

9. Կենդանու հերձում՝ մանր կենդանի՝ 1000 դրամ,

խոշոր կենդանի՝ 3000 դրամ,

10. Կենդանու բուժում՝ կախված հիվանդությունների տեսակից և կենդանու տեսակից՝ յուրաքանչյուր այցելությունը՝ մանր կենդանի՝ 1000 դրամ,

խոշոր կենդանի՝ 2000 դրամ,

11. Կենդանիների նախասպանդային զննում՝ կախված կենդանու տեսակից՝

մանր կենդանի՝ 1000 դրամ,

խոշոր կենդանի՝ 2000 դրամ,

12. Կենդանիների հետսպանդային զննում /մինչև 2019թ. Հուլիս ամիսը/՝

մանր կենդանի՝ 1000 դրամ,

խոշոր կենդանի՝ 2000 դրամ,

4) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ 500 դրամ.

5) Համայնքի կողմից աղբահանությունը կազմակերպելու համար աղբահանության վճար սահմանել յուրաքանչյուր բնակչի համար ամսական 100 դրամ,

Ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝

ա. ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար 1.500 դրամ, կամ

բ. ըստ զանգվածի մեկ տոննա աղբի համար 5. 000 դրամ

իսկ համայնքում

4) Իրավաբանական անձանց աղբահանության վճարի չափ սահմանել յուրաքանչյուր ամսվա

համար հետևյալ սակագներով՝

ա.առևտրի /այդ թվում շուկաների/, հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ մատուցողների համար – 20 դրամ /1քառ.մ./.

բ.արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների համար - 4դրամ /1քառ.մ/.

գ. կրթական, մշակութային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական շինությունների համար – 2 դրամ /1քառ.մ./:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ոստան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Ոստան, 2-33-07, 2-52-90, vostangyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 33

ՈՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ, ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 11-րդ և 28-րդ կետերով ավագանին

ՈՐՈՇԵՑ

Հաստատել Ոստան համայնքի ղեկավարի աշխատավարձի, համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների հետևյալ թվաքանակը՝ 13, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելված 2-ի:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ

ԱԼՈՅԱՆ ՇՈՂԻԿ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՆԱՐԻՆԵ

ԱՐՇԱԿՅԱՆ ԳԵՂԱՄ

ԲԱԴԱԼՅԱՆ ԱՐԵՒ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԾՈՎԻԿ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՌՈՒՍՏԱՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՀԱԿՈԲ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

Հավելված 2
Ոստան համայնքի ավագանու
21.12.2018թ. թիվ 33-Ն որոշման

2018Թ. ՈՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ, ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Աշխատակիցների թվաքանակը՝ 9
Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

h/h	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը ՀՀ դրամ
1.	Համայնքի ղեկավար	1	340000
	Հայեցողական պաշտոններ՝		
2.	Համայնքի ղեկավարի տեղակալ	1	249000
	Համայնքային ծառայության պաշտոններ՝		
3.	Աշխատակազմի քարտուղար	1	277000
4.	Գլխավոր մասնագետ	1	249000
5.	Առաջատար մասնագետ	2	224000
6.	Առաջին կարգի մասնագետ	1	201000
7.	Երկրորդ կարգի մասնագետ	1	180000
	Տեխսպասարկման անձնակազմ՝		
8.	Հավաքարար	1	95000
9.	Պահակ	1	190000

ՈՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ոստան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Ոստան, 2-33-07, 2-52-90, vostangyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 34

ՈՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետով ավագանին

ՈՐՈՇԵՑ

Համայնքի 2018 թվականի բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունը.

Նվազեցնել. 11-01-02-51 ,,վարչական բյուջեի պահուստային ֆոնդ,, ծրագրի 4891 ,,պահուստային միջոցներ,, հոդվածը 289.0 հազ.դրամով:

10-07-01-54 ,,սոցիալապես անապահով անձանց աջակցություն,, ծրագրի 4239 ,,ընդհանուր բնույթի այլ ծառայություններ,, հոդվածը 135.0 հազ.դրամով:

08-02-04-51 ,,մշակութային միջոցառումների իրականացում,, ծրագրի 4216 ,,գույքի և սարքավորումների վարձակալություն,, հոդվածը 250.0 հազ.դրամով:

05-01-01-51 ,,աղբահանություն և սանիտարական մաքրում,, ծրագրի 4822 ,,այլ հարկեր,, հոդվածը 20.0 հազ.դրամով, 4215 ,,ապահովագրության ծառայություններ,, հոդվածը 14.0 հազ.դրամով:

01-06-01-55 ,,գույքի նկատմամբ իրավունքների գրանցման և տեղեկատվությունների տրամադրում,, ծրագրի 4241 ,,մասնագիտական ծառայություններ,, հոդվածը 250.0 հազ.դրամով, 4823 ,,պարտադիր վճարներ,, հոդվածը 150.0 հազ.դրամով:

09-02-02-51 ,,հանրակրթական ուսուցում,, ծրագրի 4269 ,,հատուկ նպատակային այլ նյութեր,, հոդվածը 250.0 հազ.դրամով:

Ավելացնել. 05-01-01-51 ,,աղբահանություն և սանիտարական մաքրում,, ծրագրի 4213 ,,կոմունալ ծառայություններ,, հոդվածը 200.0 հազ.դրամով:

01-01-01-51 ,,կառավարման մարմնի պահպանում,, ծրագրի 4241 ,,մասնագիտական ծառայություններ,, հոդվածը 100.0 հազ.դրամ, 4111 ,,աշխատավարձ,, հոդվածը 1058.0 հազ.դրամով:

Նվազեցնել. 08-05-01-55 ,,հանգիստ, մշակույթ և կրոն,, ծրագրի 5112 ,,շենքերի և շինությունների շինարարություն,, հոդվածը 1050.0 հազ.դրամով:

Ավելացնել. 06-04-01-52 ,,արտաքին լուսավորության ցանցի շահագործում և պահպանում,, ծրագրի 5113 ,,շենքերի և շինությունների կապիտալ շինարարություն,, հոդվածը 1050.0 հազ.դրամով, 5134 ,,նախագծահետազոտական ծախսեր,, հոդվածը 40.0 հազ.դրամով:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ

ԱԼՈՅԱՆ ՇՈՂԻԿ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՆԱՐԻՆԵ

ԱՐՇԱԿՅԱՆ ԳԵՂԱՄ

ԲԱԴԱԼՅԱՆ ԱՐԵՒ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՇՈՎԻԿ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՌՈՒՍՏԱՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՀԱԿՈԲ ԽԱՉԱՏՐՅԱՆ**